ԲՈՒՆԻԱԹ ՍԵԲԱՍՏԱՑԻ — *Գիրք բժշկութեան (ԺԷ դար), աշխատասիրությամբ՝ Դ. Մ. Կարապետյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 192 էջ։*

XVII դ. սեբաստահայ բժիշկ Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան»-ը դասվում է միջնադարյան հայ գործնական բժշկության կարևոր արժեքների շարքը՝ դառնալով թերապիայի ճշգրտված ուղեցույց։ Բժշկարանը բաղկացած է 50 գլխից, որի մեջ Սեբաստացին կանգ է առել համարյա բոլոր օրգան-համակարգերի ախտաբանական շեղումների վրա, անդրադարձել է ներքին հիվանդություններին, դրանց ախտանիշագիտությանը, ապաքինմանը, դիետային։ Մասնավորապես քննել է նյարդային համակարգի զանազան ախտահարումները՝ ընկնավորությունը, կաթվածը, վերջույթների դողը, ջղաձգությունները, նկարագրել է աչքի, ականջի, քթի, շնչական ուղիների, սրտի, ստամոքս-աղիքային ուղիների, լյարդի, փայծաղի, երիկամների և սեռական օրգանների հիվանդությունները, շարադրել դրանց բուժման ուղիները։ Առանձին դեղամիջոցների նկարագրությանը և դրանց բուժական հատկություններին են նվիրված բժշկարանի մի քանի գլուխները։

Գիրքն ունի տարընթերցվածներ, ռուսերեն ամփոփում, օտար և անծանոթ բառերի ու տերմինների բառարան, հիվանդությունների և դեղանունների ցանկ։

Գրքի պատասխանատու խմբագիր՝ Հ. Դ. Փափազյան։

«ՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (1794—1920)», *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 758 էջ։*

Մատենագիտության բովանդակությունը ներառնում է հայ քննադատական մտքի զարգացման պատմությունը նրա կազմավորման սկզբնական շրջանից՝ XVIII դ. վերջից, մինչև XX դ. 10-ական թվականները։ Մատենագիտությունը ծառայում է ինչպես հայ քննադատության ուսումնասիրությանը, այնպես էլ հայ հասարակական մտքի, մշակույթի, բանասիրության ամենաբազմազան հարցերի հետազոտությանը։ Գրքի մեջ ընտրվել և ներկայացվել են հայերեն առաջին պարբերականի՝ «Ազդարարի» ժամանակներից (1794-1796) մինչև 1920 թ. լույս տեսած 220 պարբերականների քննադատական հոդվածները։ Արտացոլվել է հայ քննադատական մտքի բնորոշ սկզբունքներից մեկը՝ ազգի երկու հատվածների՝ արևմտահայ և արևելահայ, գրականության միասնականության հարցը՝ պարզելով դրանց գրապատմական կյանքի առանձնահատկությունները, փոխադարձ ճանաչողությունն ու մերձեցումը, ուղենշելով միասնական զարգացման հեռանկարները։

Մատենագիտությունը կազմվել է ժամանակագրական կարգով։ Գրքից օգտվելը դյուրացնելու նպատակով վերջում տրված են անվանացանկ և մամուլի օրգանների այբբենական ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Մ. Դավթյան։

ՖԵԼԻՔՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ — *Ֆենոլոգիայի հայ-ռուսերեն բացատրական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 115 էջ։*

Բառարանը ֆենոլոգիայի բնագավառում առաջին փորձն է. միութենական հանրապետությունների որևէ ազգային լեզվով առայսօր ամբողջական ֆենոլոգիական բառարան չի կազմվել։ Բառարանում ընդգրկված են շուրջ 530 տերմին և անվանում։ Այն կազմված է տերմինարանի սկզբունքով։ Տերմիններն

ու անվանումները դասավորված և համարակալված են այբբենական կարգով։ Բերված են տերմինների ռուսերեն համարժեքները և դրանց համառոտ բնորոշումը։ Այն ոչ թե տեղեկատու, այլ բացատրական բառարան է։

Կատարված է նաև տերմինաշինական որոշ աշխատանք։ Առաջին անգամ օգտագործման առաջարկվող տերմինները բերված են աստղանիշով։ Բառարանն ունի ռուսերեն տերմինների այբբենական ցանկ (ռուսերեն)։

Պատասխանատու խմբագիրներ՝ Լ. Վ. Հարությունյան, Լ. Բ. Պետրոսյան։

ՀԱՄԼԵՏ ԵԳԱՆՅԱՆ — *Հոգևորականության դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում (1953-1978 թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 222 էջ։*

Գրքի երեք գլուխներում լուսաբանվում է 1953 թ. Իրանի ռազմական հեղաշրջումը և քննվում Իրանի շահի ձեռնարկած բարեփոխումների ծրագիրը։ Բացահայտվում են հոգևորականության ընդդիմությունն ու դժգոհությունը այդ բարեփոխումների դեմ, նրանց պայքարն իրենց դիրքերի վերականգնման ու ամրապնդման համար։ Գիրքն ունի վերջաբան և օգտագործված գրականության ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Ջ. Ս. Կիրակոսյան։

ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ — *Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ՝ Ջ. Ա. Էյնաթյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 394 էջ։*

Միջնադարյան հայ բնագիտական մտքի ուշագրավ ներկայացուցիչներից է տոմարագետ, մաթեմատիկոս Հակոբ Ղրիմեցին (XIV—XV դդ.), որը տոմարագիտության վերջին նշանավոր ներկայացուցիչն է Հայաստանում։ Գրքում ներկայացվում են Հ. Ղրիմեցու աշխատությունները, որոնք վերաբերում են մարգակազմությանը, քարոզներին, ազգականության և պսակի կանոններին, քերականական գործերին։ Բացահայտվում է Հ. Ղրիմեցու դերը հայ երաժշտական մտքի պատմության մեջ, դասագրքերի կազմման և մաթեմատիկա ու տոմարագիտություն ուսուցանելու բնագավառում։ Գիրքն ունի բնագրեր, տարընթերցվածներ և ծանոթագրություններ։

Պատասխանատու խմբագիրներ՝ Լ. Վ. Միրզոյան, Հ. Դ. Փափազյան։

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ — *Երկերի ժողովածու, հ. 14, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 666 էջ։*

Դ. Դեմիրճյանի Երկերի ժողովածուի վերջին՝ XIV, հատորով ավարտվեց հայ մեծ արձակագրի ստեղծագործությունների ակադեմիական հրատարակությունը։ Գիրքն իր մեջ ներառնում է հեղինակի հուշերը, նամակները, հոդվածները (1913-1956), երգիծական երեք դիմանկարներ։ Հատորն ունի համառոտագրությունների, ծանոթագրությունների, հասցեատերերի և Դ. Դեմիրճյանի երկերի այբբենական ցանկեր։

Հատորի խմբագիր՝ Պ. Հ. Հակոբյան։